Արձանագրություն 3
«Վեդու ծննդատուն» ՓԲԸ կարիքների համար «ՎԾ-ԷԱՃԱՊՁԲ -19/5» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 11.01.2019թ. ժամը 12:30-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ
Գ.Գաբրիելյան – «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահ
Անդամներ
Ա.Առաքելյան - «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի հաշվապահ
Մ. Խլղաթյան- «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի համակարգչային օպերատոր

Քարտուղար-գնումների համակարգող

Գ.Ամիրջանյան - «Վեդու ծննդատուն» ՓԲԸ-ի տնտեսագետ

1. ՀՀ Կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Գ. Գաբրիելյան)

1. Ընդունել ի գիտություն, որ

1.1 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ կառավարության պետական եկամուտների կոմիտե «ՎԾ-ԷԱՃԱՊՁԲ -19/5» ծածկագրով գնման գործընթացում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որ «Ֆլեշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

1.2 «ՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ գրված մասնակիցներին համակարգի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը.

-Հանձնաժողովի քարտուղարը ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև գնահատման թերթիկների երկուական օրինակները տրամադրել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին:

-Հանձնաժողովի անդամները գնահատման թերթիկների մեկական օրինակները ներկայացրել են հանձնաժողովի քարտուղարին

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

2. Գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Գ. Գաբրիելյան)

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացրած գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ՎԾ-ԷԱՃԱՊՁԲ -19/5» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Ֆլեշ» ՍՊԸ	բավարար

-Մասնակցի կողմից ներկայացված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. Հաստատել «ՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցների մասին

(Գ. Գաբրիելյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ՎԾ-ԷԱՃԱՊՁԲ -19/5» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Ֆլեշ» ՍՊԸ-ին ըստ չափաբաժինների:

Ընտրված մասնակից	Չափաբաժնի համարը
«Ֆլեշ» ՍՊԸ	1, 2,

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

4. <u>Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին</u>

4.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի հայտարարել անգործության ժամկետ 10 օրացուցային օր:

4.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը՝ ընտրված մասնակիցին տալ պայմանագրի շնորհում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Գաբրիելյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Առաքելյան

_____ Մ. Խլղաթյան

Քարտուղար՝ _____ Գ. Ամիրջանյան